ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ թիվ 3
06.07.2021թ. կնքված N ՏԿԵՆ-ՄԱԾՁԲ-2021/1ՏՀ պետական գնման պայմանագրի

ք. Երևան «22» «09» 2022թ.

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Ա. Երիցյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Սուֆետ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Վ. Չիլինգարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, միասին այսուհետև՝ Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, հիմք ընդունելով Կողմերի միջև 06.07.2021թ. կնքված N ՏԿԵՆ-ՄԱԾՁԲ-2021/1ՏՀ պետական գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5 կետը, ՀՀ կառավարության 2022 թվականի սեպտեմբերի 1-ի N 1382-Ն և ՀՀ կառավարության 2022 թվականի օգոստոսի 11-ի N 1252-Ն որոշումները՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

Կողմերը որոշեցին՝

1.1 Հաստատել Համաձայնագրի նոր 2022թ Վճարման ժամանակացույցը համաձայն՝ Հավելվածի:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Համաձայնագիրը կնքվում է հայերեն լեզվով երկու օրինակից, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

3.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	«Սուֆետ» ՍՊԸ
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,	ՀՀ, Տավուշի մարզ, գ. Ջուջևան, 3փ., 4 նրբ, 4 տուն
ՀՀ կենտրոնական գանձապետարան	«Ամերիաբանկ» ՓԲԸ
ՀՀ 900011002632	ՀՀ 1570014998450100
ՀՎՀՀ 02815457	ՀՎՀՀ 07404587
գլխավոր քարտուղար	Տնօրեն
Ա. Երիցյան	Վ. Չիլինգարյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հաստատված է
N ՏԿԵՆ-ՄԱՇՁԲ-2021/1Տ գնման պայմանագրի
«22» «03» 2022թ. կնքված
թիվ 3 Համաձայնագրով
Հավելված

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

(ՀՀ դրամ)

Իրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Գնման ենթակա աշխատանքների անվանումը	Աշխատանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը տարի
1	71351540/28	Տեխնիկական հսկողության ծառայություններ	---	---	---	---	---	852 000	7 668 000	17 364 000	18 012 000	18 936 000	18 936 000	18 936 000	18 936 000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900011002632
ՀՎՀՀ 02815457
գլխավոր քարտուղար
Ա. Երիցյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Սուֆետ» ՍՊԸ
ՀՀ, Տավուշի մարզ, գ. Ջուջևան, 3փ., 4 նրբ,
4 տուն
«Ամերիաբանկ» ՓԲԸ
ՀՀ 1570014998450100
ՀՎՀՀ 07404587
Տնօրեն
Վ. Չիլինգարյան

(ստորագրություն)
Կ.Տ.

AMERIABANK

15.09.2022թ.
O.AB.100.12CIB.PIED.0.23363.22

Բենեֆիցիար՝
ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն

ԵՐԱՇԽԻՔ No. O.AB.100.12CIB.PIED.0.23363.22
(ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ Երաշխիք) հանդիսանում է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (այսուհետ՝ Բենեֆիցիար) և «ՍՈՒՖԵՏ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Պրինցիպալ) միջև 06.07.2021թ. կնքված թիվ ՏԿԵՆ-ՄԱ-ԾՁԲ-2021/1ՏՀ պայմանագրից (այսուհետ՝ Պայմանագիր) բխող՝ Պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ Երաշխավորված պարտավորություններ) պատշաճ կատարման ապահովում:

2. Երաշխիքով «Ամերիաբանկ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է Բենեֆիցիարի՝ սույն Երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ Պահանջ) Բենեֆիցիարին վճարել մինչև 72,000.00 (յոթանասուներկու հազար) ՀՀ դրամ (այսուհետ՝ Երաշխիքի գումար)՝ Պահանջն ստանալուց հետո տասը աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է Բենեֆիցիարի՝ Պահանջում նշված հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն Երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն Երաշխիքից բխող Բենեֆիցիարի՝ Երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի՝ Երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է թողարկման օրվանից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 31-ի օրվան հաջորդող ինսուներորդ աշխատանքային օրը ներառյալ, բայց ամեն դեպքում Երաշխիքը կարող է գործել ոչ ավելի երկար, քան մինչև 31 մայիսի 2023թ. ներառյալ, որից հետո սույն Երաշխիքը համարվում է ուժը կորցրած: Սույն Երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը Երաշխիք տվող անձը Երաշխիքը տրամադրելու օրը իր իրավասու էլեկտրոնային փոստի հասցեից (tradefinance@ameriabank.am) ուղարկում է նաև սույն Երաշխիքի 1-ին կետում նշված Պայմանագրի կնքման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին (iskuhiosipyan@gmail.com):

6. Բենեֆիցիարը Պահանջը ներկայացնում է Երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

6.1) թիվ ՏԿԵՆ-ՄԱ-ԾՁԲ-2021/1ՏՀ Պայմանագրի՝ ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները,

6.2) Բենեֆիցիարի կողմից Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակված ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը Բենեֆիցիարի կողմից ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն Երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է Բենեֆիցիարի Պահանջը, եթե՝

8.1) Պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն Երաշխիքի պայմաններին.

8.2) Պահանջը ներկայացվել է Երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը Պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է Բենեֆիցիարին:

10. Սույն Երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն Երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Առևտրի ֆինանսավորման կենտրոնի դեկավար՝
Սուրեն Քոչարյան

Ամերիաբանկ ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, 0010
Վ. Սարգսյան փող. 2
(+374 10) 56 11 11
ameriabank.am
info@ameriabank.am

#bankaboutyou

AMERIABANK

15.09.2022թ.
O.AB.100.12CIB.PIED.0.23366.22

Բենեֆիցիար՝
ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն

ԵՐԱՇԽԻՔ No. O.AB.100.12CIB.PIED.0.23366.22
(ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ Երաշխիք) հանդիսանում է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (այսուհետ՝ Բենեֆիցիար) կողմից ՏԿԵՆ-ՄԱԾՁԲ-2021/1ՏՀ ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում «ՍՈՒՖԵՏ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Պրինցիպալ) կողմից 06.07.2021թ. կնքված թիվ ՏԿԵՆ-ՄԱ-ԾՁԲ-2021/1ՏՀ պայմանագրով (այսուհետ՝ Պայմանագիր) նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման (այսուհետ՝ Երաշխավորված պարտավորություններ) ապահովում:

2. Երաշխիքով «Ամերիաբանկ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է Բենեֆիցիարի՝ սույն Երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ Պահանջ) Բենեֆիցիարին վճարել մինչև 108,000.00 (մեկ հարյուր ութ հազար) ՀՀ դրամ (այսուհետ՝ Երաշխիքի գումար)՝ Պահանջն ստանալուց հետո տասը աշխատանքային օրվա ընթացքում: Երաշխիքի գումարը վճարելիս հաշվի են առնվում Պայմանագրի կատարման շրջանակում Բենեֆիցիարի և Պրինցիպալի միջև երկկողմ պատշաճ ձևով հաստատված և Պրինցիպալի կողմից Երաշխիքը տվող անձին ներկայացված հանձնման-ընդունման արձանագրության (արձանագրությունների) հիման վրա Երաշխիքի գումարից կատարված նվազեցումները:

Վճարումը կատարվում է Բենեֆիցիարի՝ Պահանջում նշված հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն Երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն Երաշխիքից բխող Բենեֆիցիարի՝ Երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի՝ Երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է թողարկման օրվանից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 31-ի օրվան հաջորդող ինսուներորդ աշխատանքային օրը ներառյալ, բայց ամեն դեպքում Երաշխիքը կարող է գործել ոչ ավելի երկար, քան մինչև 31 մայիսի 2023թ. ներառյալ, որից հետո սույն Երաշխիքը համարվում է ուժը կորցրած: Սույն Երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը Երաշխիք տվող անձը Երաշխիքը տրամադրելու օրը իր իրավասու էլեկտրոնային փոստի հասցեից (tradefinance@ameriabank.am) ուղարկում է նաև սույն Երաշխիքի 1-ին կետում նշված Պայմանագրի կնքման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին (iskuhiosipyan@gmail.com):

6. Բենեֆիցիարը Պահանջը ներկայացնում է Երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

6.1) թիվ ՏԿԵՆ-ՄԱ-ԾՁԲ-2021/1ՏՀ Պայմանագրի՝ ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները,

6.2) Բենեֆիցիարի կողմից Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակված ծանուցումը,

6.3) Պայմանագրի շրջանակում Բենեֆիցիարի և Պրինցիպալի միջև պատշաճ ձևով երկկողմ հաստատված բոլոր հանձնման-ընդունման արձանագրություն/ները կամ դրա/դրանց պատճենները:

7. Երաշխիք տվող անձը Բենեֆիցիարի կողմից ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն Երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է Բենեֆիցիարի Պահանջը, եթե՝

8.1) Պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն Երաշխիքի պայմաններին.

8.2) Պահանջը ներկայացվել է Երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը Պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է Բենեֆիցիարին:

10. Սույն Երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն Երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Առևտրի ֆինանսավորման կենտրոնի ղեկավար՝
Սուրեն Քոչարյան

Ամերիաբանկ ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, 0010
Վ. Սարգսյան փող. 2
(+374 10) 56 11 11
ameriabank.am
info@ameriabank.am

#bankaboutyou